



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**

**Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com**



**ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ  
 ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

Մանուկներու եւ պատանիներու կրօնադաստիարակչական եւ հայեցի կրթութեան նուիրուած մեր Կիրակնօրեայ Դպրոցները կը վայելէն անվերապահ հոգածութիւնն ու հովանաւորութիւնը Թեմիս բարեշան Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Սուշեղ Ա. Արք. Սարտիրոսեանի: Կամաւոր եւ գիտակից ուսուցչական կազմերու խնամքին եւ հոգածութեան յանձնուած աշակերտութեան՝ ամէն Կիրակի մեծ սիրով, համբերութեամբ եւ յանձնառութեամբ կ'ուսուցուն անտարանական պատումներ եւ դրուագներ, սաղմոս, աղօթք, շարական ինչպէս նաեւ կրօնական եւ եկեղեցագիտական ծանօթութիւն կը ջամբուի մեր նոր սերունդի զաւակներուն: Իսկ ուսուցչական կազմեր, յաճախակի հանդիպումներով, միօրեայ կամ երկօրեայ դաստիարակչական բնոյթի հոգեշահ համագումարներ կը կազմակերպեն, նպատակ ունենալով ի մի խմբել մեր Թեմի եկեղեցիներու ուսուցչական կազմերը եւ անոնց փոխանցել անհրաժեշտ գիտելիք՝ հայ եկեղեցւոյ պատմութեան, դաւանաքին, տօնակարգին թէ եկեղեցագիտական նիւթերու մասին:

Հիւրընկալութեամբ Մոնթեպելլոյի Ա. Խաչ Մայր Տաճարի Կիրակնօրեայ Դպրոցին, նման հանդիպում-հաւաք մը տեղի ունեցաւ նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին՝ Շաբաթ, 29 Ապրիլ, 2006-ի առաւօտեան ժամը 10:00-3:00: Համագումարին կը մասնակցէին շուրջ երեսուն ուսուցիչ-ուսուցչուհիներ, կրօնական դաստիարակութեան գրասենեակի վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան, Ա. Խաչ Մայր Տաճարի Յովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան, Փասատինայի Ա. Սարգիս եկեղեցւոյ Յովիւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան եւ Կլենտէյլի Ա. Աստուածածին եկեղեցւոյ Յովիւներէն Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Թորոսեան:

Առաւօտեան ժամերգութեամբ սկիզբ առած Կիրակնօրեայ համագումարին, Հայր Պարթեւ Կիւլիւմեան, յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, ողջունեց ներկաները եւ զանոնք հրաւիրեց ըլլալու Քրիստոսի հրաշափառ յարութեան վկաները եւ ուսուցիչ-տարածիչները, որովհետեւ, ըսաւ, առանց յարութեան հրաշքին՝ չկայ քրիստոնեական եկեղեցի, ինքնախաբեութիւն է մեր հաւատքն ու Աւետարանին քարոզութիւնը:

Ապա, համագումարին մասնակիցները անցան Թումանճեան սրահ, ուր Հայր Միւռն ներկայացուց իր դասխօսութիւնը, նիւթ ունենալով՝ Յարութեան Յիսուսքի Կիրակիները եւ Հոգեգալուստի Տօնը: Ան լուսապաստառի վրայ մանրամասն օրէն ներկայացուց Քրիստոսի հրաշափառ յարութենէն ետք, քառասուն օրերու ընթացքին իղաբեր կանանց, իր առաքելներուն, աշակերտներուն եւ հետեւորդներուն

բազմաթիւ անգամներ Անոր յայտնութիւններուն, անոնց հետ կատարած զրոյցներուն եւ տուած պատուերներուն մասին դասախօսութիւն մը: Այսպէս, Հայր Սուրբը յարութեան յաջորդող Տերունի օրերու Կիրակիները եւ տօները թուելով, բացատրութիւններ տուաւ Նոր Կիրակիի, Աշխարհամատրան, Կանաչ եւ Կարմիր Կիրակիներու, Երեւման Ս. Խաչի Կիրակիի, Համբարձման եւ Հոգեգալուստի տօներու աւետարանական, պատմական եւ կրօնական-հոգեւոր իմաստներուն մասին: Իսկ Հայր Պարթեւ, Յարութեան եւ Յիսնակի շարականներու ներկայացումը եւ մեկնաբանութիւնը կատարեց, շեշտելով որ երգը մեր ներաշխարհի ապրումներուն, յոյզերուն եւ զգացումներուն, ինչպէս նաեւ պատմական դէպքեր եւ պատումներ նկարագրելու եւ ներկայացնելու կենդանի, հաղորդական ու անմիջական դրսեւորում է: Մեր շարա-կանները, ըսաւ զեկուցաբեր Հայր Սուրբը, որպէս գրական սեռ, ունին հոգեւոր, դաստիարակչական բնոյթ՝ դէպքեր եւ հրաշքեր նկարագրելու եւ աւետարանական ճշմարտութիւններ ուսուցանելու: Հոն կը գտնենք փառաբանութիւն, զղջում-աղերսանք, մաղթանք եւ պաղատանք: Սահակ-Մեսրոպի եւ Թարգմանիչ Վարդապետներու, եկեղեցական հայրերու թէ երաժիշտ հոգեւորականներու կողմէ գրուած մեր շարականները մեր ժողովուրդի բոլոր խաւերը նկատի առնելով գրած են դաստիարակելու, յուսադրելու, քաջալերելու եւ դէպի Աստուած առաջնորդելու: Շարականներու մասին ընդհանուր գաղափար եւ բացատրութիւններ տալէ ետք, Հայր Պարթեւ ներկայացուց Յարութեան եւ Յիսնակի շարականները:

Դասախօսութեանց եւ զեկոյցներու աւարտին, տեղի ունեցաւ հարց-պատասխանի բաժին, ուր յաւելեալ լուսաբանական եւ գոհացուցիչ տեղեկութիւններ փոխանցուեցան:

Համագումարին մասնակցող ուսուցիչ-ուսուցչուհիներ առիթ ունեցան նաեւ իրենց կիրակնօրեայ դպրոցներու վերաբերեալ մտահոգութիւններ եւ կրօնադաստիարակչական ծրագիրներուն առնչուող հարցեր արծարծել: Այս առթիւ, Կիրակնօրեայ Դպրոցներու Տեսուչներուն յանձնուեցաւ լսարանային բաժնի դասընթացքներու եւ կիրակնօրեայ դասաւանդութեանց ծրագրի օրինակներ, պատրաստուած՝ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակին կողմէ:

Հաւաքը խմբային նկարով եւ փակման աղօթքով վերջ գտաւ յետ միջօրէ ժամը երեքին: Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչակազմեր՝ նոր գիտելիքներով եւ հոգեւոր ծանօթութիւններով հարստացած, գոհունակ մեկնեցան եկեղեցւոյ շրջափակէն, վերահաստատելով իրենց յանձնառութիւնը եւ նուիրումը՝ իրենց խնամքին յանձնուած հայ մանուկներն ու պատանիները կրօնական եւ հայեցի առողջ կրթութեամբ դաստիարակելու, եւ նման շինիչ ու օգտակար հաւաքներ եւ առիթներ յաճախ կազմակերպելու:

Մ.Շ.Վ.Ա.

## ONE-DAY SEMINAR FOR SUNDAY SCHOOL DIRECTORS AND TEACHERS

On Saturday, April 29, 2006 a one-day seminar took place for Sunday School directors and teachers.

The event was organized by the Prelacy Christian Education Department and hosted by Holy Cross Mother Cathedral. Over 30 teachers attended the seminar along with Christian Education Department directors Very Rev. Frs. Muron Aznikian and Barthev Gulumian, Rev. Ashod Kambourian of Holy Cross Cathedral. Rev. Khoren Baboshian of St. Sarkis Church, and Rev. Gomidas Torossian of St. Mary's Church.

The seminar began at 10 a.m. with opening prayers and welcoming remarks by Very Rev. Fr. Barthev Gulumian on behalf of the Prelate, H.E. Archbishop Moushegh Mardirossian. Very Rev. Fr. Muron Aznikian spoke on the topic of the Sundays of Eastertide and Pentecost, followed by Very Rev. Fr. Barthev Gulumian on the hymns of Easter and Eastertide. Following the lectures, there was a question and answer session where the participants were further enlightened.

The seminar was an opportunity for the Sunday School teachers to express their concerns, share experiences and receive helpful advice on various matters.

The seminar came to a close at 3 p.m. with a group picture and closing prayers.